ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ում
ԳԲԽ-ԱՄ-2017/05 բողոքը քննող խորհրդի անդամի

ԳԲԽ-ԱՄ-2017/05 բողոքը քննող խորհրդի անդամը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 2017 թվականի մայիսի 23-ի բողոքով ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով 2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի 23.05.2017թ. բողոքով ներկայացված՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Ախտահանիչ և լաբորատոր նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավեր հայտարարելու մասին 2017թ. մարտի 6-ի թիվ 1 որոշումը՝ թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10 և 11-րդ չափաբաժինների մասով, կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել:

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ